

ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐՈՒ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Վեր. Յովհաննէս Փ. Ահարոնեան (1909–1986)

Ծնած է Ջէյթուն: 1948ին մագիստրականով կը վկայուի Շիրակոյի Մըք Քոմմիք Աստուածաբանական Դպրոցէն՝ քրիստոնէական դաստիարակութեան գծով: Հոն եա, ան կը ձեռնադրուի: 1949-77՝ կը վարէ ՄԱՀԱԵՄի կեդրոնական մարմնին ատենապետութիւնը, օրինական ընդմիջումներով: Ահարոնեան մեծ դեր ունի 1955ին Հայկազեան Գոլէճի հիմնադրման աշխատանքներուն մէջ: 1955-80՝ մաս կազմած է Գոլէճի խնամակալ մարմնին, վարելով անոր ատենապետութիւնը 17 տարի: 1940ականներէն մասնակցած է United Missionary Councilի, Near East Christian Councilի, Near East Council of Churchesի եւ Middle East Council of Churchesի խորհուրդներուն: Հելինակ է Հայ Անդարանական եկեղեցին Ճանապարհներու Խաչածնունդին հատորին (խմբ. Երուանդ Հ. Քասունի, Պէյրութ, 1988):

Մելինէ Անումեան

melanumyan@gmail.com

Ծնած է 1977ին, Երեւան: 2012ին պաշտպանած է թեկնածուական՝ «Հայոց Յեղապանութեան Խնդիրը Երիտթուրքերի Դատավարութիւններում (1919-1921 թթ.)» նիւթով: 2009ին աւագ գիտաշխատող է եւ ղեկավար՝ Արեւմտահայոց Հարցերի Ուսումնասիրութեան Կենտրոն գիտահետազոտական հիմնադրամի թրքերէն բաժնին: Անդամ է Յեղասպանագիտական Հանդէսի խմբագրակազմին: Ունի թրքերէն եւ թրքերէնի թարգմանութիւններ, 2013ին լոյս տեսած է իր *Ճանաչում եւ Դարապարտում. Երիտթուրքերի Դատավարութիւնները 1919-1921թթ.* (անգլ.՝ 2017, թրք.՝ 2018) հատորը: 2018ին իր թարգմանութեամբ լոյս տեսաւ Քեմալ Եալքընի *Վերջին Ցանկութիւնս. Պոլսահայ Բրնդա Ժամկոչեան-Բաշարի Յիշարակին* գիրքը: Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն Հայոց Յեղասպանութիւնը, երիտթուրքերու դատավարութիւնները, Միութիւն եւ Յառաջդիմութիւն Կուսակցութեան պատմութիւնը, Թուրքիոյ հայ բռնաները, իսլամացումը հայերը: 2019էն կ'աշխատակցի Հայկազեան Հայագիտական Հանդէսին:

Կարինէ Ասատրեան

asatryan.karine.m@gmail.com

Ծնած է 1978ին, ՀՀ Արմավիրի Լուկաշին գիւղը: 2012ին պաշտպանած է թեկնածուական՝ «Ազատ Ուտանաւորը 20րդ Դարի Առաջին Կեսի Հայ Բանաստեղծութեան Մէջ» նիւթով: 2005-07՝ Արորա ուստիօկայանի խմբագիր, 2011-13՝ Հայաստանի Ազգային Գրապատի մատենագէտ, 2013էն հայոց լեզուի եւ գրականութեան ուսուցիչ է՝ «Քվանտ» վարժարանին մէջ: Հրատարակած է ուսումնասիրութիւններ հայ բանաստեղծութեան եւ հայ-օտար բանաստեղծական յարաբերութիւններու մասին:

Տ. Ներսէս Քինյ. Ասրեան

monk-deacon@mail.ru

Ծնած է 1980ին, Շուշի: 2006ին աւարտած է Ս. Էջմիածնի Գեորգեան Հոգեւոր Ճեմարանը: 2009-16՝ Արցախի Հանրապետութեան Պաշտպանութեան Բանակի գնդերեց, 2009էն՝ տնօրէն է Հայ Առաքելական եկեղեցիի Արցախի Թեմի տեղեկատուական համակարգին: 2016էն հոգեւոր հովին է Ստեփանակերտի Աստուա-

ծամոր Ս. Յովհան մայր եկեղեցիին և ծխակատար քահանան՝ Ասկերանի Ս. Աստուածածին եկեղեցիին: Ունի ուսումնասիրական յօդուածներ և հրապարակումներ: Գիտական հետաքրքրությունները կ'ընդգրկեն Ի.-ԻԱ. դարերու Հայ եկեղեցւոյ պատմութիւնը, տօները և ծէսերը, արցախեան հիմնախնդիրը, աստուածաբանութիւն, աղանդներ: 2016էն կ'աշխատակցի Հայկազեան Հայագիտական Հանդէսին:

Հայկ Աազեան

haigavakian@yahoo.com

Ծնած է 1964ին, Գահիրէ: 1991ին աւարտած է Երեւանի Կոմիտասի անուան Երաժշտանոցի դաշնակի և երաժշտագիտութեան բաժինները: 1991-94՝ մաս կազմած է Գահիրէի Երաժշտանոցի ուսուցչական կազմին, 1992-2009՝ Գահիրէի Օփերայի երգչախումբի խմբավար, 2007-10՝ Աղեքսանդրիոյ Մատենադարանի Քառածայն և Մանկական երգչախումբերուն գեղարուեստական ղեկավար: Տնած է բազմաթիւ դաշնակի մենանուագներ:

Հեղինակ է հայերէն, արաբերէն և անգլերէն անելի քան 50 երաժշտագիտական, բանասիրական ու պատմափիլիսոփայական հատորներու: 2001-08՝ խմբագրած է *Ծիծեռնակ* երաժշտական ռումանան, պատրաստած է հայկական առաջին օփերայի՝ Տիգրան Զուհաճեանի *Արշակ Բ.* (1868) բնագիր տարբերակի քննական խմբագրութիւնը: Խմբագրած և հրատարակած է անտիպ երկասիրութիւններ: 2013էն կ'աշխատակցի *Ջահակիրին*, որուն խմբագրական խորհրդատուն է 2016էն:

Հեղինակային իր վերջին գիրքերն են՝ *Կոմիտաս Վարդապետի Բաց Սերողծագործութիւն Հասկացողութիւնը* (2019) և *Մշոյ Ս. Կարապետ Վանքի Մշակութային Ժառանգութիւնը* և *Կոմիտաս Վարդապետի Մշոյ Շորորը* (2019): Մասնակցած է Հայկական Սփիւղի Ուսումնասիրութեան Կեդրոնի կազմակերպած և այլ գիտաժողովներու: 2018էն կ'աշխատակցի *Հայկազեան Հայագիտական Հանդէսին*:

Արծուի Բախչինեան

artsvi@yahoo.com

Ծնած է 1971ին, Երեւան: 1996ին պաշտպանած է թեկնածական «Վահան Տէրեւանի Ստեղծագործական Աշխատանոցը» նիւթով: Գիտաշխատող է ՀՀ ԳԱԱ Պատմութեան Հիմնարկի Հայ Գարթաւայրերի և Սփիւղի Բաժնին մէջ: Հեղինակ է բազմաթիւ ուսումնասիրական հատորներու, յօդուածներու, թարգմանութիւններու, որոնց վերջինը՝ *Հայ Կիսօ – 100* (2018): Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն սփիւղեացիայ համայնքներու պատմութիւնն ու պատմամշակութային առնչութիւնները, հայ շարժանկարի, պարարուեստի պատմութիւնը, նոր շրջանի պատմաբանասիրական նիւթերը, երեւելի հայագիւններ, հայ լրատվարչական արուեստը...: 1998էն կ'աշխատակցի *Հայկազեան Հայագիտական Հանդէսին*: 2001էն *Հայկազեան Հայագիտական Հանդէսի* ներկայացուցիչն է Երեւանի մէջ:

Միհրան Գալստեան

akoonk@yahoo.com

Ծնած է 1958ին, ՀՀ Գեղարքունիքի մարզի Գառա գաղաքը: 2016ին պաշտպանած է դոկտորականը՝ «Աշխատանքային Միգրացիայի Սոցիալ-Մշակութային Հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետութիւնում» նիւթով: 1989էն կը պաշտօնավարէ ՀՀ ԳԱԱ Հնագիտութեան և Ազգագրութեան Հիմնարկին մէջ, միաժամանակ 2007էն դասախօս է ԵՊՀ-ի մէջ: Համահեղինակ է *Արդի Հայ Ունեւնիքը Փոխակերպող Հասարակութիւնում* գիրքին (2017): Հեղինակած վերջին գիրքն է *Հայաս-*

յրանի Հանարապետության Ազգային Փոքրամասնությունների Միգրացիան (Էթնո-սոցիոլոգիական Հետազոտություն) (2015) հատորը:

Գիտական հետաքրքրություններու ծիրը կը կազմեն բնակչության զաղթերը, եւ մշակութային փոխակերպումները, գաղթը եւ ընտանիք, գաղթը եւ սեռոյթը:

Վաչագան Գրիգորեան

vachik_grigoryan@mail.ru

Ծնած է 1959ին, ՀՀ Կոտայքի Քաղսի գիտը: 2003ին պաշտպանած է դոկտորականը՝ «Լեւոն Շանթի Դրամատուրգիան» նիւթով: 2010ին ստացած է փրոֆեսորի կոչում: 1989էն դասախօս է, իսկ 2003էն վարիչը՝ Գաադի Պետական Համալսարանի հայոց լեզու եւ գրականութիւն ամբիոնի, 1991-95՝ Հրազդանի շրջանային ժողկրթբաժնի վարիչ, 1996-99՝ Կոտայքի մարզի կրթութեան վարչութեան պետի տեղակալ: 2013ին արժանացած է «Հրանտ Մայետտեան» մրցանակին: Հեղինակ է շարք մը հատորներու, վերջինը՝ *Լեւոն Խեչոյեանի Արեւոձագործութիւնը* (2019): Գիտական հետաքրքրություններու ծիրը դասական եւ արդի գրականութիւնն է: 2001էն կ'աշխատակցի *Հայկազեան Հայագիտական Հանդէսին*:

Արմենակ Եղիայեան

armenag@gmail.com

Ծնած է 1939ին, Պորոճ Համուտ, Լիբանան: 1964ին աւարտած է Սէն ժոզէֆ Համալսարանի Ֆրանսական Գրականութեան եւ Լեզուի (Ecole des Lettres), իսկ 1970ին՝ Ատամնարուժութեան Բաժանմունքները: Խմբագրած է թարգմանած եւ թագմաթիւ հատորներ, կատարած արեւելահայերէնէ արեւմտահայերէնի փոխադրումներ: Հեղինակ է *Մետրուպեան Տառերու Ակունքները* (2005) մենագրութեան եւ նախակրթարանի *Ծիածան* դասագիրքերու (5 հատոր ընթերցարան, 5 հատոր քննականութիւն, 10 հատոր ուղեցոյց) (1991-95): Անտիպ է իր «Արեւմտահայերէնի Ուղղագրական, Ուղղախօսական, Ոճաբանական Ուղեցոյց» աշխատութիւնը: Գիտական հետաքրքրությունները կ'ընդգրկեն հայոց լեզուի կառոյցն ու շարահիւստութիւնը: 2014էն կ'աշխատակցի *Հայկազեան Հայագիտական Հանդէսին*:

Մաքսիմ Եաւտեան

myevadian@univ-catholyon.fr

Ծնած է 1979ին, Ֆրանսա: 2017ին պաշտպանած է դոկտորական՝ «Pilgrims, Preachers and Other Travellers of Armenia in the Latin World (11th century)» նիւթով: 2011էն վարիչն է l'Université Catholique de Lyonի հայագիտական ամբիոնին, իսկ 2017էն՝ նոյն համալսարանի Երասիական Ուսումնասիրութեանց Կեդրոնին: Հեղինակ է գիրքերու, վերջինը՝ *Les Métamorphoses de Tigrane avec Alexandre Siranossian* (2014): Գիտական հետաքրքրություններու ծիրը կ'ընդգրկէ Հայաստանի քրիստոնէացումը, հին եւ միջնադարեան Հայաստանի պատմութիւնը, Մետաքսի Ճամփան, Միջին Արեւելքի քրիստոնէութիւնը եւ միջքրիստոնէական յարաբերությունները, հայ մշակոյթը՝ դրամագիտութիւն, վիճակագրութիւն, ճարտարապետութիւն, միջնադարեան հայ բժշկագիտութիւն, սեւեռ-հայ ճարտարապետական փոխարարբերությունները, առեւտուրը, ֆրանսահայ պատմութիւնը: 2011էն կ'աշխատակցի *Հայկազեան Հայագիտական Հանդէսին*:

Զան Էրզուրումլուօղլու

canerzurumluoglu@hotmail.com

Ծնած է 1980ին, Պոլիս: 2017ին պաշտպանած է մագիստրականը՝ «Une Comparaison Critique de la Conception de L'espace Chez Leibniz et Chez Kant» նիւթով:

2001-10՝ իբրեւ ուսուցիչ պաշտօնավարած է պոլսահայ վարժարաններու մէջ, իսկ 2015էն՝ ուսողութեան դասախօս է Նիշանթաշը Համալսարանին մէջ:

Իւլթ Թաջարեան

yvettetaj@yahoo.com

Ծնած է 1975ին, Թեհրան: 2006ին պաշտպանած է թեկնածուականը՝ «Անթուան Սեբուրգիի Լուսանկարչական Արուեստը» նիւթով: 2013էն՝ արագ գիտաշխատող է Մաշտոցի Անուան Մատենադարանի Արեւելագիտութեան բաժինը: 2006-09՝ Երեւանի Թորոս Ռոսլինի Անուան Տիգայնի Հիմնարկի դասախօս, 2006էն՝ օգնական դասախօս՝ ԵՊՀ Պատմութեան Ֆակուլտետի Հայ Արուեստի Պատմութեան եւ Տեսութեան ամբիոնի: 2018էն անդամ է պարսկերէն *Պայման մշակութային եռամսեայ հանդէսի* գիտական խմբագրակազմին: Հեղինակ է *Լուսանկարչութեան Պարմութիւն* (2019) հատորին:

Գիտաուսումնասիրական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ իսլամական արուեստ, իրանական արուեստ, պարսկական մանրանկարչութիւն, իրանահայ արուեստ, ժամանակակից իրանական արուեստ, լուսանկարչութեան պատմութիւն:

Պետրոս Թորոսեան

Bedros_torosian@outlook.com

Ծնած է Պէյրութ, 1994ին: 2019ին պաշտպանած է մագիստրականը՝ «In Search of Haven and Seeking Fortune: The Economic Role of Ottoman Armenian Migrants in British-Occupied Egypt (1882-1914)» նիւթով: Ներկայիս դոկտորական ուսման կը հետեւի պատմութեան մէջ՝ Մ. Նահանգներու Ըրվայն Համալսարանը: Մասնակցած է Հայկական Սփիւռքի Ուսումնասիրութեան Կեդրոնի կազմակերպած գիտաժողովներու: Գիտական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ ԺԹ դարու Օսմանեան Կայսրութեան պատմութիւնը, կրթական համակարգը, որբախնամ գործունէութիւնը, ուսանողական-երիտասարդական շարժումները: 2018էն կ'աշխատակցի *Հայկազեան Հայագիտական Հանդէսին*:

Վեր. Ռընէ Լեոնեան

rene.leonian@gmail.com

Ծնած է 1952ին, Մարսել: 1999ին պաշտպանած է դոկտորականը՝ «Création du Mouvement Evangélique Arménien en Arménie et dans le Caucase»: 1976-82՝ խմբագիր Ֆրանսայի Հայ Անտարանական Եկեղեցիներու *Ճրագ* երկամսեային, 1997-2011՝ խմբագիր *Հայաստանեայց Անտարանական Եկեղեցի* եռամսեային: 1993-94՝ ՀՀ Ֆրանսայի դեսպանատան աշխատակազմի ղեկավար: 1998-2001՝ Խորհրդատու ՀՀ Նախագահի աշխատակազմի: 1997-2007՝ Նախագահ Հայաստանի Անտարանական Աստուածաբանական Զեմարանի: 1994-2011՝ ՀՀ Ներկայացուցիչ՝ Հայ Անտ. Համաշխարհային Խորհուրդի եւ Ամերիկայի Հայ Անտարանական ընկերակցութեան: 2012էն՝ Հայ Անտարանական Համաշխարհային Խորհուրդի եւ Ամերիկայի Հայ Անտարանական Ընկերակցութեան ներկայացուցիչ՝ Եւրասիայի: 1974-93՝ Լիոնի եւ Փարիզի, 2014ին՝ Ալֆորվիլի, իսկ 2015ին՝ Թորոնթոյի Հայ Անտարանական Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ:

Հեղինակ է *Les Arméniens de France Sont-ils Assimilés* գիրքին (1986):

Սվանթէ Լինստրէն

svante.lundgren@ctr.lu.se

Ծնած է 1960ին, Ֆինլանտա: Աստուածաբանութեան դոկտոր վկայրած է Ֆինլանտայի Åbo Akademi համալսարանէն 1992ին: Ներկայիս հետազօտող է Շուէտի Լուն-

տի Համայնարանի Աստուածաբանության եւ Կրօնագիտության Կեդրոնին մէջ: Հետազոտութիւններ կատարած է հրեայ մտածողութեան, հրեայփոխ-քրիստոնէութիւն փոխարաբերութեանց, Հայոց Յեղասպանութեան եւ Միջին Արեւելքի քրիստոնեայ համայնքներուն մասին: Վերջին հրատարակութիւնը՝ *The Assyrians - Fifty Years in Sweden* (2019): Անգղոյն էր *Map of Salvation* (2015)՝ հայկական վանքազրական ֆիլմին: 2019ին կ'աշխատակցի *Հայկազեան Հայագիտական Հանդէսին*:

Ջաէն Կենազեան

zavenkniasian@yahoo.com.ar

Ծնած է 1959ին, Պոնտոս Ալթէ: Հետեւած է Պոնտոս Ալթէի Պետական Համալսարանի ճարտարագիտութեան դասընթացներուն:

1992ին հայ մշակոյթ կը դասաւանդէ Ս. Գրիգոր Լուսատորիչ Կրթական Հաստատութեան մէջ: Անդամ է Արժանիքի երաժշտագիտութեան Ընկերակցութեան: Հրատարակած է բազմաթիւ գիտական ու հանրամատչելի յօդածներ հայերէն ու սլաւոներէն: Վերջին հրատարակութիւնն է *La Historia Armenia a Través de un Traje* (Հայոց պատմութիւնը տարագի մը ընդմէջէն, 2018): Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն հայկական նուագարանները, դրօշակներն ու գինանշանները, պարագիտութիւնն ու ազգագրութիւնը, պատմաբանասիրական խնդիրները: 2018ին կ'աշխատակցի *Հայկազեան Հայագիտական Հանդէսին*:

Քրիստինէ Կոստիկեան

kkostikyan@yahoo.com

Ծնած է 1971ին, Երեւան: 2018ին պաշտպանած է դոկտորականը՝ «Մատենադարանի Պարսկերէն Վատարագրերը Հայոց Պատմութեան Սկզբնաղբիւր (XVII դարի II կէտ-XIX դարի I կէտ)» նիւթով: Գիտաշխատող է ՀՀ ԳԱԱ Արեւելագիտութեան Հիմնարկի եւ Մաշտոցի Անուան Մատենադարանին մէջ ու դասախօս՝ ԵՊՀ Պատմութեան Ֆակուլտէտի: Համահեղինակ է գիրքերու, որոնց վերջինը՝ Ժ. Մաշտոցեանի հետ՝ *Միջին Սասնի ա, Թագքիրաթ Ալ-Մուկուր* (Օտար Աղբիւրները Հայաստանի եւ Հայերի Մասին մատենաշար, Պարսկական Աղբիւրներ, Ա., 2019) երկը, հեղինակ է գիրքերու, որոնց վերջինը՝ *Catalogue of Persian Manuscripts in the Matenadaran* (2017):

Գիտաուսումնասիրական հետաքրքրութիւններու ծիրը հայոց պատմութիւնն է, Իրանի պատմութիւնը, հայ-իրանական փոխարաբերութիւնները՝ ԺԶ.-ԺԺ. դարերուն, պարսկական աղբիւրագիտութիւնը (պատմագրական երկեր, ծեռագրեր եւ վանքագրեր): 2013կ'աշխատակցի *Հայկազեան Հայագիտական Հանդէսին*:

Վաչէ Ղազարեան

vatcheg@gmail.com

Ծնած է 1954ին, Հալէպ: 1983ին պաշտպանած է թեկնածուականը՝ «Վահան Թէքեանի Կեանքը եւ Ստեղծագործութիւնը» նիւթով: 2002ին կը պաշտօնավարէ իբրեւ ակադեմական մասնագէտ, փրոֆեսորի աստիճանով, օտար լեզուներու հիմնարկի մէջ: Խմբագրած եւ հրատարակութեան պատրաստած է բազմաթիւ անտիպ ուսումնասիրութիւններ, յօւեր, կատարած է թարգմանութիւններ: Հեղինակ է բազմաթիւ գիտական յօդածներու եւ մենագրութիւններու, որոնց վերջինն է *Ազգային Պարոտիրակութեան Գործունէութիւնը 1915-1916* (2017)՝ հատորը: Գիտական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ ազգային պատմութիւնը եւ գրականութիւնը, ի մասնատրի Յակոբ Օշականը, Վահան Թէքեանը, Արմենական

Կուսակցությունը, հայ կուսակցությանը ծրագիր-կանոնագրերը, Պօղոս Նուպարի գործունեությունը, արևմտահայությունը Օսմանեան Կայսրության մէջ, Բաքլէն Կիլիկիեան աթոռակից կաթողիկոսի կենսագործունեությունը: 1981էն կ'աշխատակցի Հայկազեան Հայագիտական Հանդէսին:

Թաթուլ Մանասերեան

tatoulm@gmail.com

Ծնած է 1960ին, Երեւան: 2001ին պաշտպանած է դոկտորականը՝ «Միջազգային Նոր Տնտեսակարգի Հիմնախնդիրները» նիւթով:

ԵՊՀ դասախօս-փրոֆեսոր է 1998էն: 1991էն կը ղեկավարէ Այլընտրանք Հետազօտական Կեդրոնը, գլխաւոր խմբագիրն է *Այլընտրանք* գիտական հանդէսին: Գիտական խորհրդատուութիւն կատարած է Շանհայի, Փեքինի, Էնթուրփի, Քենզըսի, Սան Ֆրանսիսքոյի, Սալեմթոյի, Լոնտոնի, Պանքրօքի, Սթենֆորտի, Քալիֆօրնիոյ համալսարաններուն մէջ: 2009-11՝ ՀՀ ազգային ժողովի նախագահի խորհրդական, 2003-7՝ ազգային ժողովի պատգամաւոր, 2001-2՝ Ռազմավարական եւ Ազգային Հետազօտութիւնների Կեդրոնի գիտական ղեկավար, 2000-1՝ ՀՀ արտաքին գործոց նախարարութեան նախարարի խորհրդական, 1998-9՝ ՀՀ նախագահին կից Քաղաքական Խորհուրդի Տնտեսական Ենթայանձնախումբի նախագահ, 1997-8՝ ՀՀ արդիւնաբերութեան եւ առեւտրի փոխնախարարի պաշտօնատար: Հեղինակ է մեծաթիւ յօդուածներու եւ գիրքերու՝ տնտեսական անվտանգութեան, միջազգային նոր տնտեսակարգի, ֆինանսական շուկաներու, պատերազմի տնտեսագիտութեան եւ ռազմարդիւնաբերական համալիրի եւ տնտեսական բնոյթի հիմնախնդիրներու մասին: 2019էն կ'աշխատակցի Հայկազեան Հայագիտական Հանդէսին:

Վարդան Մատթէոսեան

varny1@yahoo.com

Ծնած է 1964ին, Մոնթէվիտէ: 2005ին պաշտպանած է թեկնածուականը՝ «Հայերը Արժանթինի մէջ՝ Սկիզբէն Մինչեւ 1950» նիւթով: 2019էն կը վարէ Նիւ Եորքի Արեւելեան թեմի դիւանապետի պաշտօնը: Հեղինակ է հայերէն, սպաներէն ու անգլերէն հատորներու, բազմաթիւ գիտական յօդուածներու, խմբագրած ու թարգմանած է բազմաթիւ հատորներ՝ հայերէն, սպաներէն ու անգլերէն: Վերջին հրատարակուած հատորն է *Armenian Language Matters*, 2019ին:

Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն Սկիտքը, հայոց հնագոյն եւ նոր պատմութիւնը, հայ նոր եւ նորագոյն գրականութիւնը, պատմաբանասիրական խնդիրներ: 1996էն կ'աշխատակցի Հայկազեան Հայագիտական Հանդէսին:

Թեհմինէ Մարտոյեան

tehminemartoyan@gmail.com

Ծնած է Երեւան, 1977ին: 2007ին պաշտպանած է թեկնածուականը՝ «Կարմէլեանների Տարեգրությունը՝ Որպէս Իրանի 17-18րդ Դարերի Պատմագիտական Աղբիւր» նիւթով, զոր գիրք իբրեւ հրատարակած է 2011ին: 2020ին պաշտպանած է երկրորդ մագիստրականը՝ «Զմիւռնիայի Հայերի եւ Յոյների Բնացնումն ու Բաղաքի Հրկիզումը՝ Որպէս Ցեղասպան Քաղաքականութեան Շարունակութիւն» նիւթով: 2012էն դասախօս է Աւետիք Սկրտչեանի անուան Տնտեսաիրաւագիտական Համալսարանը: 2015 Յունուարէն նախագահն է Լազարեան Ինստիտուտ Գիտակրթական Հասարակական Կազմակերպութեան: 2019էն աւագ գիտաշխատող է Հայոց Ցեղասպանութեան Թանգարան-Ինստիտուտի թանգարանային ցուցադրու-

թիւներու կազմակերպման բաժնին մէջ: Ունի նաեւ թարգմանութիւններ: 2015էն կ'աշխատակցի Հայկազեան Հայագիտական Հանդէսին:

Արեւիկ Մելիքեան

arevikmeliqyan@gmail.com

Ծնած է 1965ին, Շիրակի մարզի Մեծ Սեպասար գիւղը: 1990ին աւարտած է ԵՊՀ Պատմութեան ֆակուլտետը: 1990էն կը պաշտօնավարէ Հայոց Ազգագրութեան եւ Ազատագրական Պայքարի Պատմութեան Ազգային Թանգարանը, 2007էն՝ Բաժնի վարիչ: Հեղինակ է շարք մը տեղեկատուական յօդուածներու, համահեղինակ՝ գիրքերու: Գիտական հետաքրքրութիւններու ոլորտը կ'ընդգրկէ 1918ի Մայիսեան հերոսամարտերը:

Միհրան Մինասեան

mihran.min@gmail.com

Ծնած է Հալէպ: Նախակրթութիւնը ստացած է Հալէպի Ազգային Հայկազեան Վարժարանէն, իսկ երկրորդականը՝ Ազգային Քարէն Եփփէ Ճեմարանէն: Կատարած է հայերէնէ արաբերէն եւ արաբերէնէ հայերէն թարգմանութիւններ, հրատարակելով չորս հատորներ: Արհ. Պետրոս Արք. Միրիաթեանի համահեղինակութեամբ հրատարակած է Հալէպցիներու Ապստամբութիւնը Կուսակալ Խորշիկ Փաշայի Դէմ (1819-1820) - Աբրահամ Արք. Քիւփէէեանի Օրագրութիւնը արաբերէն հատորը 2008ին: Կ'աշխատակցի Հասկ Հայագիտական Տարեգիրքին, Բագինին, իսկ 1981էն իվեր՝ Հայկազեան Հայագիտական Հանդէսին եւ այլ հանդէսներու եւ յօդուածներու ժողովածու գիրքերու՝ պատմաքանասիրական ուսումնասիրութիւններով, նովորած՝ հայ հնատիպ գիրքին, հայ պարբերական մամուլի մատենագիտութեան, հայերէն ձեռագրերուն, Հայոց Յեղասպանութեան պատմութեան, հայ լուսակարգութեան, յուշամատեններու եւն.: Զբաղած է նաեւ բանաստեղծութեամբ եւ Հայոց Յեղասպանութենէն հարիրաւոր վերապրողներէ գրի առած անոնց վկայութիւններն ու ազգագրական-բանահիւսական հսկայական նիւթ: Անդամ է Սուրիոյ Արաբ Գրողներու եւ Հայաստանի Գրողներու միութեանց: 2012էն կ'ապրի Երեւան ու կը պաշտօնավարէ Մաշտոցի Անուան Մատենադարանի եւ Հայոց Յեղասպանութեան Թանգարան-Հիմնարկին մէջ:

Նիկիտ Միրզայեան

n.mirzayans@gmail.com

Ծնած է Նոր Զուղայ, 1953ին: 1978ին աւարտած է Թեհրանի Շարիֆ Արհեստագիտական Համալսարանի մետաղագիտութեան ճարտարագիտութեան բաժնիը: Ծառայած է ազգային-մշակութային եւ հասարակական գործունէութիւն, հիմնադիր-ներէն է Նոր Զուղայի Իրանահայ Ազգային Միշակութային Միութեան, հիմնած է «Արմէն» ճատրակի ակումբը 2001ին, որ առաջին ոչ-միութենական ակումբն է Իրանի մէջ: Ունի պատմաքանասիրական, ազգագրական, հրապարակագրական երկեր: Պարսկերէնի թարգմանած է հայրենի հեղինակներու երկեր, աշխատասիրած է 2017ին հրատարակած է Տաղեր Նոր Զուղայի Աշտղներոց երկը:

Անի Մխիթարեան

amkhitaryan89@gmail.com

Ծնած է 1989ին, Թալինի Աշնակ գիւղը: 2013ին պաշտպանած է մագիստրականը՝ «Հայկական Տարազը Գեղանկարիչների Գործերում» նիւթով: Ներկայիս կը պատրաստէ իր թեկնածուականը:

2014-17՝ աշխատած է Հայոց Ազգագրության եւ Ազատագրական Պայքարի Պատմության Ազգային Թանգարանը, աշխատակցած է *Էջմիածին* Ամսագիրին: Գիտական հետաքրքրություններու ծիրը կ'ընդգրկէ միջնադարեան հայ արուեստը, հայկական ազգային տարազը, հայկական գորգագործությունը, հայկական զարդարուեստը, գործուածքը:

Արա Մարտիրոսեան

aramart@rambler.ru

Ծնած է 1970ին, Երեւան: 1993ին աւարտած է ԵՊՀ Պատմութեան Ֆակուլտետը: Պաշտօնավարած է իբրեւ ուսուցիչ, ՀՀ դաւիթի լրատուական կենտրոնի խմբագիր, Հայաստանի Հանրապետութիւն, Ժամանակ, Ազգ օրաթերթերու լրագրող, Արարար-Մեզըզին ամսագրի գլխաւոր խմբագիր, 2011-19՝ Խ. Արուեանի անուան Հայկական Պետական Մանկավարժական Համալսարանի Մշակոյթի Ֆակուլտետի լրագրութեան դասախօս: Իր տնտեսական այլազան յօդուած-ուսումնասիրութիւններուն համար արժանացած է զանազան մամուլի մրցանակներու:

Արմէն Միքայէեան

armen_michaelian@yahoo.com

Ծնած է Երեւան, 1960ին: 1982ին աւարտած է Երեւանի Պետական Համալսարանի Պատմութեան բաժանմունքը, 1982-92՝ աշխատած է Հայաստանի Գիտութիւնների Ակադեմիայի Պատմութեան հիմնարկին մէջ, 1993ին աւարտած է Ֆրանսայի Գործարարների Եւրոպական Ուսումնավարչի դասընթացը: Հրատարակած է շարք մը գիտական եւ հրապարակախօսական յօդուածներ, հեղինակ է ապագայագիտական, գիտափոխափայական եւ լեզուաբանական աշխատութիւններու:

Կարէն Մկրտչեան

K86Mkrtchyan@gmail.com

Ծնած է 1986ին, Երեւան: 2014ին պաշտպանած է թեկնածուականը՝ «Հայ-Իրանական Յարաբերութիւնները 1991-2005 թթ.» նիւթով: Ներկայիս ՀՀ ԳԱԱ Պատմութեան Հիմնարկի հայ գաղթօճախներու եւ Ափիւղքի պատմութեան գիտաշխատող է: Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն համաշխարհային նոր համակարգը, ՀՀ-Իրանի ԻՀ քաղաքական, տնտեսական, գիտակրթական, մշակութային յարաբերութիւնները, Իրանի հայ համայնքը, ղարաբաղեան հակամարտութիւնը, Հայոց Տեղապահութեան հարցերը: 2018ին կ'աշխատակցի Հայկազեան Հայագիտական Հանդէսին:

Հեղինէ Մկրտչեան

heghmk@yahoo.com

Ծնած է 1959ին, Երեւան: 1994ին հետեւած է Գերմանիոյ Դաշնային Հանրապետութեան Լրագրութեան Միջազգային Հիմնարկի դասընթացներուն: 1997ին իվեր կը պաշտօնավարէ Մայր Աթոռ Ս. Էջմիածին, նախ իբրեւ Մամուլ Դիւանի պատասխանատու, տեղեկատուական համակարգի մամուլի պատասխանատու, ապա՝ տեղեկատուական համակարգի խմբագիր: 1996էն հիմնադիր խորհուրդի անդամ է Երեւանի Մամուլի Ազգային Ակումբին: Աշխատակցած է հայկական եւ ոչ-հայալեզու մամուլին: Խմբագրած է զանազան գիրքեր: Հրատարակած վերջին երկն է *Կանանց Կուսութեան Ուժադի Նորայայտ Կարգ Երուսաղէմի ԺՇ: Դարի Մաշտոցում* (2015): Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն Հայ եկեղեցւոյ պատմութիւնը:

Սիւզաննա Մուրադեան

syuzmuradyan@gmail.com

Ծնած է 1983ին, Արմաիր: 2011ին պաշտպանած է մագիստրականը «Արեւմտեան Խնցեղէնը» նիւթով: 2017էն գիտաշխատող է ՀՀ ԳԱԱ Հնագիտութեան եւ Ազգագրութեան Հիմնարկը, հեղինակ է շարք մը գիտական ուսումնասիրութիւններու: Գիտական հետաքրքրութիւններու ծիրը դասական հնագիտութիւնն է, հնագիտական պեղումները:

Զաւէն Մսրըլեան

Ծնած է 1938ին, Պէյրութ: 1963ին՝ պաշտպանած է մագիստրականը: 2003ին ՀՀ ԳԱ Ակադեմիան իրեն շնորհած է Պատուոյ Դոկտորայի կոչում, իսկ 2014ին ընտրուած է ՀՀԳԱԱ Արտասահմանեան Անդամ:

Ասպարէզով կրթական մշակ է: 1967-2017՝ եղած է Պէյրութի Հայ Անտ. Գոլէճի տնօրէնը: 2004էն աւտենպետն է Մեծի Տանն Կիլիկիոյ Հայոց Կաթողիկոսութեան Ուիչըրտ եւ Թինա Քարոլան Հրատարակչական Հիմնադրամին:

Հեղինակ է մօտ 100 պատմական ուսումնասիրութիւններու, քաղաքի գիրքերու, որոնց վերջինը՝ *Armenian Participation in the Lebanese Legislative Elections 1934-2009* (2014): 1971էն կ'աշխատակցի Հայկազեան Հայագիտական Հանդէսին:

Գայիանէ Յակոբեան

gayik20@gmail.com

Ծնած է 1981ին, Արթիկ, Շիրակի մարզ: 2020ին պաշտպանած է թեկնածուականը՝ «Սիրիահայերի Սոցիալ-Մշակութային Ադապտացիայի Հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետութիւնում» նիւթով: 2014էն գիտաշխատող է ՀՀ ԳԱԱ Հնագիտութեան եւ Ազգագրութեան Հիմնարկին մէջ:

Հրատարակած է հայաստանաբանակ սուրիահայերու մասին ուսումնասիրութիւններ: Գիտական հետաքրքրութիւններու ծիրը էթնիկ խումբերու ընկերամշակութային հիմնախնդիրներն են:

Արսէն Յարութեան

ars.vimagraget@gmail.com

Ծնած է 1985ին, Երեւան: 2013ին պաշտպանած է թեկնածուականը՝ «Վարդապատի Վանքերը (Պատմավիմագրագիտական Ուսումնասիրութիւն)» նիւթով:

2009էն առաջ գիտաշխատող է ՀՀ ԳԱԱ Հնագիտութեան եւ Ազգագրութեան հիմնարկի, վիմագրութեան բաժնին, 2012էն նաեւ առաջ գիտաշխատող՝ Մշտնոցի Անտան Մատենադարանի ծնագրագիտութեան բաժնի: 2019էն վիմագրութիւն կը դասաւանդէ ԵՊՀ Պատմութեան Ֆակուլտետի, Հնագիտութեան եւ Ազգագրութեան ամբիոնին մէջ:

Համահեղինակ է շարք մը գիրքերու, հրատարակած է նաեւ ուսումնասիրութիւններ: Գիտական հետաքրքրութիւններու ծիրը հայ վիմագրութիւնն է, ծնագրագիտութիւնը, միջնադարեան հնագիտութիւնը: 2017էն կ'աշխատակցի Հայկազեան Հայագիտական Հանդէսին:

Լիլիթ Յովհաննիսեան

lilithovannisian@yahoo.com

Ծնած է 1972ին, Երեւան: 1998ին պաշտպանած է թեկնածուականը՝ «Հայկական Հարցը եւ Մեծ Տէրութիւնները 1914-1917 թթ.» նիւթով: 2003ին ընտրուած է դոցնետի տիտղոս: 1996էն գիտաշխատող է ՀՀ ԳԱԱ Պատմութեան Հիմնարկի, եւ դասախօս է ԳԱԱ Գիտակրթական Միջազգային Կենտրոնի եւ ԵՊՀ Հայագիտական

Հետազոտություններու Հիմնարկի, 2000էն դասախօս, իսկ 2007էն վարիչ՝ Գաճոր Համալսարանի միջազգային յարաբերություններու բաժնին: 2017էն անդամ է Հայաստանի Պատմագետներու Միության: Արժանացած է բազմաթիւ պատուոգրերու եւ գնահատագրերու:

Հեղինակ է բազմաթիւ յօդածներու եւ մենագրություններու, որոնց վերջինը՝ Հայկական Հարցը եւ Մեծ Տերությունները 1914-1917 Թուականներին (2002): Գիտական հետաքրքրություններու ծիրը կ'ընդգրկէ Հայկական Հարցի եւ Հայոց Ցեղասպանության պատմության ու պատմագրության հարցերը:

Քրիստինէ Նաչարեան

kristnajaryan@gmail.com

Ծնած է 1986ին, Արմավիր, ՀՀ: 2014ին պաշտպանած է մագիստրականը՝ «ՀՀ Բարձրագույն Կրթության Բարեփոխումները Բոլոնիայի Գործընթացի Համատեքստում» նիստով: Ներկայիս կ'ամբողջացնէ իր թեկնածուականը, միաժամանակ Հայոց Ցեղասպանության Թանգարան-Ինստիտուտին մէջ կը վարէ կրթական ծրագրերու բաժինը: Խմբագրած է Հայոց Ցեղասպանության Թեմայի Ուսուցման Հարցի Շուրջ, Ինչպէս Դասաւանդել Հայոց Ցեղասպանության Թեման, Ձեռնարկ Ուսուցիչներին Համար (2014) հատորը:

Գիտական հետաքրքրություններու ծիրը կ'ընդգրկէ Հայոց Ցեղասպանության նիստի ուսումնասիրութիւնը ՀՀ կրթական համակարգին մէջ, եւ Հայոց Ցեղասպանության իրազեկման մեթոդաբանական ու կիրառական ուղղությունները:

Արսէն Շահինեան

a.shaginyan@spbu.ru

Ծնած է 1975ին, Էջմիածին: 2010ին, Ս. Պետերբուրգի Պետական Համալսարանի Պատմության Հիմնարկին մէջ պաշտպանած է դոկտորականը՝ «Հայաստանը եւ Հարակից վայրերի Երկրները Է. Թ. Դարերում, Հայոց Ինքնակառավարումը Բիւզանդական եւ Արաբական Գերիշխանության պայմաններում» նիստով:

2011էն կը պաշտօնավարէ Ս. Պետերբուրգի Պետական Համալսարանի Պատմության Հիմնարկին մէջ: Հրատարակած վերջին մենագրութիւնն է *Арабо-Мусульманская Историография IX в. о Странах и Народах Кавказа, Армянского Нагорья и Смежных Областей* (Թ. դարի արաբ-մահմեդական պատմագրութիւնը՝ Կովկասի, Հայկական Բարձրաւանդակի եւ յարակից շրջանների երկրների եւ ժողովուրդների մասին, 2018), իսկ վերջին րոտական դասագիրքը՝ *История Стран Ближнего и Среднего Востока от Поздней Античности до Современности* (Մերձաւոր եւ Միջին Արեւելքի երկիրներու պատմութիւնը՝ ուշ Անտիկ շրջանէն մինչեւ մեր օրերը, Մոսկուա, 2020): Գիտական հետաքրքրությունները կ'ընդգրկեն Մերձաւոր Արեւելքի եւ Հարաւային Կովկասի երկիրներու վաղ միջնադարեան պատմութիւնն ու աշխարհագրութիւնը, հայագիտութեան եւ կովկասագիտութեան պատմութիւնը Ս. Պետերբուրգի եւ Ռուսաստանի մէջ: 2010էն կ'աշխատակցի Հայկազեան Հայագիտական Հանդէսին:

Վահրամ Շեմմասեան

vahram.shemmajian@csun.edu

Ծնած է 1951ին, Թրիփոլի, Լիբանան: 1996ին պաշտպանած է դոկտորականը՝ “The Armenian Villagers of Musa Dagh: A Historical-Ethnographic Study, 1840-1915” նիստով: 2006էն տնօրէն է California State University, Northridgeի ժամանակակից եւ դասական լեզուներու եւ գրականութեան բաժանմունքի հայագիտութեան բաժնին:

Ունի բազմաթիւ յօդածներ եւ Մուսա Լեւոան բնակչութեան նուիրուած մենագրութիւններ, որոնց երկրորդը՝ *The Armenians of Musa Dagh: From Obscurity to Genocide Resistance and Fame (1840-1915)* (the Press of California State University, 2020): Պարգևատրուած է ՀՀ Սփիւռքի նախարարութեան Ուիլիլմ Սարգեան շքանշանով՝ Սփիւռքի մէջ հայագիտութեան եւ հայ մշակոյթին զարգացման իր ընդած նպատակին համար (2010): Արժանացած է Միջմշակութային Հայոց Ցեղասպանութեան Թանգարան-Ինստիտուտի Ֆրանց Վերֆէլ պատուանշանին՝ առ ի գնահատանք Մուսա Լեւոան մասին իր գիտաշխատութիւններուն (2015): 2004էն կ'աշխատակցի Հայկազեան Հայագիտական Հանդէսին:

Յակոբ Զոլաքեան

hagopcholakian@hotmail.com

Ծնած է Գարատուրան, Սուրիա: 2016ին ստացած է պատմական գիտութիւններու դոկտորի աստիճան «Բեսապ (Պատմա-Ազգագրական Ուսումնասիրութիւն)» նիւթով: 2014էն ՀՀ ԳԱԱ Ազգագրութեան եւ Հնագիտութեան եւ՝ Հրաչեայ Աճառեանի Անուան Լեզուի հիմնարկներու աւագ գիտաշխատող է, դասախօս՝ ԵՊՀ:

Հեղինակ է գիտական յօդածներու եւ հատորներու, որոնց վերջինը՝ *Արեւմտահայերէնի Քերականութիւն, Կանոնակարգ եւ Խնդիրներ* (2017): Գիտական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ Քեսապը, բանահիւտութիւնը, չափածոն, սուրիահայ վարժարաններն ու մամուլը, դասագիրքերը, եղենը, արեւմտահայերէնի մշակման հարցերը: 1982էն կ'աշխատակցի Հայկազեան Հայագիտական Հանդէսին:

Յասմիկ Պարան

hasmig.baran@csun.edu

Ծնած է Հալէպ: 2012ին պաշտպանած է դոկտորականը՝ «The Role of Ethnic Culture in Work-Family Balance Among Armenian Women in Leadership Positions in Higher Education» նիւթով: 2013էն հայագիտութեան դասախօս է California State University, Northridgeի մէջ: Անդամ է Հայկազեան Համալսարանի, Լոս Անճելըսի առաջնորդարանի հայկական դպրոցներու, Analysis Research and Planning for Armenia(ARPA)ի հոգաբարձութեանց, եւ անտարանական ներկայացուցիչ՝ Լոս Անճելըսի Հայկական Միացեալ Խորհուրդին:

Հրատարակած է “The Syrian Armenian Rural Community of Ayn-El-Arous” ուսումնասիրութիւնը՝ *Armenians of Syria: Proceedings of the Conference (24-27 May 2015)* հատորին մէջ: Ակադեմական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ կրթութիւն-դաստիարակութիւնը եւ կնոջական հարցերը:

Տիգրան Պետրոսեանց

tigranhayazn@mail.ru

Ծնած է 26 Մարտ 1951ին, ՀՀ Ապարանի Վարդեմիս գիւղը: 2015ին պաշտպանած է դոկտորականը՝ Մոսկուայի Ազգային Անվտանգութեան Հիմնախնդիրներու Միջազգային Ակադեմիայի (ԱԱՀՄԱ) մէջ՝ «Հայազգի Զօրավարները Աշխարհի Բանակներում» նիւթով: Արցախեան ազատամարտի մասնակից է, մշակութաբան, խմբագիր, ՀՀ բանակի փոխգնդապետ (2000), Տոնի կազակական միաորման հրամանատար (2013), ԱԱՀՄԱի Զօրավար-գնդապետ:

Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն ԺԲ.-ԺԴ. դարերու Զաքարեան Հայաստանը, հայ զինոտրականութեան պատմութիւնը, հայկական իշխանական զինանշաններ, հայ մշակոյթի կին դէմքերը, Ապարանի պատմութիւնը: 2018էն կ'աշխատակցի Հայկազեան Հայագիտական Հանդէսին:

Կարինե Ռաֆայելյան**karine.rafaelyan@mail.ru**

Ծնած է 1964ին, Երեւան: 1985ին աւարտած է Երեւանի Խաչատուր Աբովեանի անուան Պետական Մանկավարժական Հիմնարկի (այժմ Համալսարան), Հայոց Լեզուի եւ Գրականութեան Բաժինը: 1994ին Գրականութեան եւ Արուեստի Թանգարանի մասնաճիւղ Դերեկի Դեմիրճեանի տուն-թանգարանի վարիչն է: 2008ին իբրեւ մշակութային լրագրող կը պաշտօնավարէ «Իրատես» լրատուական ցանցին մէջ: Կազմած, վերծանած, հրատարակութեան պատրաստած եւ խմբագրած է շարք մը երկեր: Հրատարակած է գրականագիտական ուսումնասիրութիւններ:

Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն գրականագիտութիւն, թանգարանագիտութիւն, մշակութաբանութիւն: 2014ին կ'աշխատակցի Հայկազեան Հայագիտական Հանդէսին:

Վերա Սահակեան**verasahakyan@gmail.com**

Ծնած է 1982ին, ՀՀ Գեղարքունիքի մարզի Ներքին Գետաշէն գիւղը:

2017ին պաշտպանած է թեկնածուանականը՝ «Յատուկ Կազմակերպութեան՝ Թեշքիլաթը Մալստաւայի Գործունէութիւնը Օսմանեան Կայսրութիւնում» նիւթով: Ներկայիս կրտսեր գիտաշխատող է Մաշտոցի Անուան Մատենադարանի արաբագիտութեան բաժնին մէջ:

Արմէն Շ. Սարգսեան**armensargg@gmail.com**

Ծնած է 1949ին, Լոռոյայ Շամուտ գիւղը: 2018ին պաշտպանած է դոկտորականը՝ «Հայ ժողովրդական Երգիծական Մանրապատումներ եւ Չուարճախօսութիւններ (Անեկդոտներ)» նիւթով: 2005էն գիտաշխատող է ԳԱԱ Հնագիտութեան եւ Ազգագրութեան Հիմնարկին մէջ, խմբագրած է շարք մը գիրքեր, հրատարակած բանահիւսական եւ լեզուաբանական ուսումնասիրութիւններ, հեղինակ է շարք մը մենագրութիւններու, վերջինը՝ *Մանկական Ծիծաղադարան* (2019):

Գիտական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ գրականութեան եւ բանահիւսութեան փոխառնութեան հարցերը, հայ մանկական բանահիւսութիւն/զուարճախօսութիւնը, հայ ժողովրդական երգիծական մանրապատումներ/զուարճախօսութիւնները, ստապատումները, հայ ժողովրդական երկխօսական-հարցուպատասխանական ասոյթաբանութիւնը, բանահաւաքութեան եւ բանահիւսութեան մեթոտաբանութիւնը, մանկագրութիւնը, առակագրութիւնը: 2015էն կ'աշխատակցի Հայկազեան Հայագիտական Հանդէսին:

Գէորգ Ստեփանեան**sasun-07@mail.ru**

Ծնած է 1966ին, Սփիւին: 2009ին պաշտպանած է դոկտորականը՝ «Բաքուի Նահանգի Հայութիւնը ԺԺ. Դարի Երկրորդ Կէսին եւ Ի. Դարի Ակզններին» նիւթով: 2013ին ստացած է փրոֆեսորի կոչում: 2008էն գիտաշխատող է ՀՀ ԳԱԱ Պատմութեան Հիմնարկի Հայ Գաղթօճախների եւ Ափիւքի Պատմութեան բաժնին մէջ, զոր կը գլխաւորէ 2016 Դեկտեմբերէն: Հեղինակ է շարք մը գիրքերու, վերջինը՝ *Համազասկ Սրուանձրեանց* (2016): Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն Պաքուի եւ Գանձակ-Ելիզաւետպոլի նահանգներու հայութիւնը: 2000էն կ'աշխատակցի Հայկազեան Հայագիտական Հանդէսին:

Անդրանիկ Տազէտեան**adakesian@haigazian.edu.lb**

Ծնած է 1960ին, Պէյրութ: 2011ին պաշտպանած է դոկտորականը՝ «Democracy and Integration in Multicommunal Politics: The Armenians and the Kurds in Lebanon» նիւթով: 1993-2016՝ պատասխանատու քարտուղար, իսկ 2016էն պատասխանատու խմբագիրն է Հայկազեան Հայագիտական Հանդէսին: Անդամ՝ Հայագիտական Հարցեր (2014էն), Յեղապահանագիտական Հանդէս (2018), Բազմավէպ (2019) պարբերականներու խմբագրակազմերուն: 2011էն տնօրէնն է Հայկազեան Համալսարանի Հայկական Ափիտքի Ուսումնասիրութեան Կեդրոնին: Խմբագրած է գիրքեր, վերջինը՝ *Յորդանանի Հայերը Գիւրաժողովի Նիւթերը* (2019), կազմած է գիրքեր, վերջինը՝ ՀԲԸՄ Հաճընի Որբանոցը (1919-1920) (2020), ունի մենագրութիւններ, վերջինը՝ *Լիբանանի Հայօճախը, Գիրք Ա., Համարկումին Խաչատրիները (1920-2005)* (2015):

Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն ժողովրդավարացումը, մարդկային իրաւանց, ինքնութեան, համարկումի, Ափիտքի մշակոյթի եւ պահպանման, Միջին Արեւելքի հայօճախներու պատմութեան հարցերը: 1993էն կ'աշխատակցի Հայկազեան Հայագիտական Հանդէսին:

Աւետիս Գ. Քալաշեան**av_kalashyan@mail.ru**

Ծնած է 1953ին, Մարալիկ: 1988ին պաշտպանած է թեկնածուական՝ «Նազարէթ Տաղաարեանի Աթէիստական (Ազատախոհական) Հայեացքները» նիւթով: 1990էն դասախօս է ԵՊՀի մէջ, 2013-17՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գեղղեան Հոգևոր Հեծմարանին մէջ, Մաշտոցի անուան Մատենադարանի աւագ գիտաշխատող է: Հեղինակ է շարք մը հատորներու, որոնցմէ վերջինը՝ *Յովհան Ոսկեքերան, Մեկնութիւն Մարգարէութեանն Երեմիայ* (2015):

2018էն կ'աշխատակցի Հայկազեան Հայագիտական Հանդէսին:

Նիքոլաս Քուրէաս**ncoureas@hotmail.com**

Ծնած է 1959ին, Նիկոսիա: 1994ին պաշտպանած է դոկտորականը՝ «The Latin Church in Cyprus 1195-1312» նիւթով: Աւագ գիտաշխատող է Կիպրոսի կրթական նախարարութեան Cyprus Research Centreի մէջ: Գիտական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ Կիպրոսի եւ Միջերկրականի պատմութիւնը՝ 1200-1500 շրջանին: Հեղինակ է բազմաթիւ թարգմանական գիրքերու, վերջինը՝ *At the Origins of the Venetian Sea State Coron and Modon 1204-1209 Critical Edition, Translation and Commentary of the Treaty of Sapienza* (2018), հեղինակ է ուսումնասիրական հատորներու, վերջինը՝ *Cypriot Medieval Ceramics: Reconsiderations and New Perspectives* (2014): 2019էն կ'աշխատակցի Հայկազեան Հայագիտական Հանդէսին:

Աննա Օնանեան**annaonanyan@mail.ru**

Ծնած է Երեւան, 1988ին: 2016ին պաշտպանած է թեկնածուական՝ «Եկեղեցական Սկիւնների Ծածկոցների Պատկերագրական եւ Զարդային Առանձնայատկութիւնները» նիւթով: 2017էն կը պաշտօնավարէ Հայաստանի Ազգային Գրադարանի Հայ Արուեստի Գրականութեան եւ ոչ-գրքային հրատարակութիւններու բաժնին մէջ: Ունի գիտական ուսումնասիրութիւններ՝ Հայ Եկեղեցւոյ ասեղնագործ ծիսական ծածկոցներու եւ սկիւնի ծածկոցներու մասին: